ԴԱՍ 9. ԳԼՈՒԽ 3 — ԼԱՎՈԴԻԿԵԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Հայտնություն 3:14-22
Նամակ Լավոդիկեային

Նոր կտակարանյան ժամանակաշրջան
New Testament Period

- Եփեսոսը՝ մեծ քաղաքական կենտրոն էր։
- Զմյուռնիան առևտրի մեծ կետնրոն էր։
- Պերգամոնը՝ մեծ կրոնական կենտրոն։
- Թիվատիրը՝ հայտնի է եղել իր Մանրագործվածքներով, հատկապես մանուշակագույն ներկերի եւ նրա առեւտրի արտադրությամբ։ (մանուշակագույն ծածկոցը խորհրդանշում էր կառավարող իշխանությունը)
- Սարդիկեն հայտնի է եղել Ոսկուց և արծաթից պատրաստված մետաղադրամներով։
- Ֆիլադելֆիան հայտնի է եղել իր խաղողի այգիներով։
- Լավոդիկիան շատ հաջողակ առևտրային և ֆինանսական կենտրոն էր։

Դեռ մնում են թատրոնի, ջրատարի, բաղնիքների, ուսումնարանի և ստադիոնի մնացորդները, որոնք վկայում են նախկին փառքի մասին։ Եկեղեցին հավանաբար հիմնադրվել է Եփապրասի կողմից. Կող. 2:1-ից ենթադրվում է, որ Պողոսն այնտեղ չի այցելել, թեև նամակ էր գրել նրանց (Կող. 4:12-14), որը, շատ հավանական է, շրջիկ մի նամակ էր, որի պատճեն պահպանվել է մեզ համար որպես Թուղթ Եփեսացիներին։

14) Եվ Լավոդիկեում գտնվող եկեղեցու հրեշտակին գրի՛ր…

1. **Լավոդիկեա** – Lao = մարդիկ, Diceans = իշխաններ։ «Մարդկանց իշխանություն» = «ինքնաբավարար» (Nicolaitans — Էջ 37)

2. Քրիստոսի տիտղոսը – Title of Christ

14) …Այսպես է ասում Ամենը՝ հավատարիմ ու ճշմարիտ Վկան,
Աստծո ստեղծագործության սկիզբը:

«**Ամեն**» = 152 անգամ 126 համարներում, ճիշտ, հաստատ (Հայտն. 1:6,7,18, Հովի. 14:6,):

Հավատարիմ և ճշմարիտ Վկա (Հայտն. 1:5, Սաղմ. 89:34-37, Ես. 55:4, Հովի. 18:37):

«Ամեն» բառը շատ նշանավոր բառ է: Այն թարգմանվել է անմիջապես եբրայերենից հունարեն Նոր Կտակարանում, այնուհետեւ Լատիներեն եւ անգլերեն եւ այլ լեզուներով, այնպես որ գործնականորեն համընդհանուր բառ է: Այն կոչվում է մարդկային խոսքի ամենահայտնի բառը: Այս բառը անմիջականորեն կապված է եբրայերեն հավատք բառի հետ, (ամամ) կամ հավատարիմ: Այսպիսով, դա նշանակում է բացարձակ վստահության եւ ճշմարտության արտահայտություն:

Ծննդոց — եբրայերեն բառը նշանակում է «սկիզբ»:

Ծնն. 1:1 - 1 Սկզբում Աստուած ստեղծեց երկինքը եւ երկիրը:

Հով. 1:1 - 1 Սկզբում էր Բանը. եւ Բանն Աստուծո մօտ էր. եւ Բանն Աստուած էր:

1 Հով. 1:1 - 1 Այն որ սկզբիցն էր, որ լսեցինք, որ մեր աչքերովը տեսանք, որին նայեցինք, եւ մեր ձեռքերը շօշափեցին՝ կեանքի Բանի համար.

Հով. 18:37 - 37 Պիղատոսն էլ ասեց նորան. Ապա ուրեմն դու թագաւո՞ր ես. պատասխանեց Հիսուսը. Դու ես ասում որ ես թագաւոր եմ. Ես դորա համար եմ ծնուել եւ եկել աշխարհ, որ ճշմարտությունը վկայեմ. ամեն ով որ ճշմարտութիւնից է՝ իմ ձայնը լսում է:

3. Գովասանք – Commendation

Այս նամակում գովասանք չկա: (Սարդիկե էջ 64)

4. Անհանգստություն – Concern

15) Գիտեմ քո գործերը, որ ոչ սառն ես, ոչ՝ տաք: Երանի թե կամ սառը լինեիր, կամ՝ տաք: 16) Բայց քանի որ դու գաղջ ես՝ ոչ տաք ես, ոչ էլ սառըԵս քեզ դուրս պիտի փսխեմ Իմ բերանից:

«**Գիտեմ քո գործերը**» — դու չես կարող թաքնվել Աստծուց… Նրանք անտարբեր էին։ Գոլ ջուրը փսխաբեր է։ Անտարբերությունն անհանդուրժելի է։ Սա միակ եկեղեցին է, որտեղ մեր Տերը զզվանքով է խոսում։

«Ոչ թե ամեն ոք, որ Ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, պիտի մտնի երկնքի թագավորությունը, այլ նա՝ ով կատարում է Իմ Հոր կամքը, որ երկնքում է։ Շատերն այն օրը Ինձ կասեն. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք և Քո անունով շատ զորավոր գործեր կատարեցինք»։ Եվ Ես այն ժամանակ նրանց հայտնապես պիտի ասեմ, թե երբեք ձեզ չեմ ճանաչել, Ինձանից հեռու՛ գնացեք, դուք՝ անօրենություն գործողներ»։

Մատթեոս 7:21-23

17) Քանի որ ասում ես, թե՝ «Հարուստ եմ, ունեցվածքով մեծացա (բարգավաճած, I have prospered) և ոչ մի բանի կարիք չունեմ», և չգիտես, թե դու խեղճ մի թշվառական ես և աղքատ, կույր ու մերկ։

(«**Դավանիր և կունենաս**» արտահայտությունն աստվածաշնչյա՞ն է)։

Անզգա էին իրենց հոգևոր կարիքների հանդեպ։ Աստված միշտ զգուշացնում է հարուստներին։ Ի հակադրություն Զմյուռնիայի, որ աղքատ էր, բայց հարուստ (Այս բոլոր եկեղեցիները տառապում են սխալ ինքնաբնկալումից…)։

5. Քաջալերանք – Exhortation

18) Քեզ **խորհուրդ եմ տալիս՝** Ինձնից կրակի մեջ փորձված ոսկի ծախու՛ առ, որպեսզի հարստանաս, և ճերմակ հանդերձանք, որ հագնես, որ չերևա քո մերկության ամոթը, և դե՛ղ դիր աչքերիդ, որ տեսնես։
19) Ես ում որ սիրում եմ, հանդիմանում եմ ու խրատում եմ, ուստի նախանձախնդի՛ր եղիր և ապաշխարի՛ր։

Ես. 9:6 - 6 Սքանչելի, **Խորհրդական**, Հզօր Աստուած, Հաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան իշխան։

1 Պետ. 1:7 - 7 Որ ձեր հավատքի փորձառութիւնն ավելի պատուական գտնուի քան կորստեան ոսկին, որ կրակով է փորձվում, գովության պատիվի եւ փառքի համար Հիսուս Քրիստոսի հայտնությունում.

20) Ահա Ես կանգնել եմ **դռան մոտ** ու թակում եմ. եթե մեկն Իմ ձայնը լսի և բացի դուռը. կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ, և նա էլ՝ Ինձ հետ։

Մատ. 24:33 - 33 Այսպէս էլ դուք. երբոր այս ամենը տեսնէք, իմացէք որ մօտ է՝ դռներին է։

Հայ. 19:9 - 9 Եւ ասեց ինձ. Գրիր, Երանելի են Գառի հարսանիքի ընթրիքին կանչուածները. եւ ասեց ինձ. Սորանք Աստուծո ճշմարիտ խօսքերն են։

6. Խոստում հաղթողներին – Promise to the Overcomer

21) Նրան, ով հաղթի, կշնորհեմ նստելու **Իմ աթոռին**, Ինձ հետ, ինչպես որ Ես հաղթանակեցի և Հորս հետ Նրա աթոռին նստեցի։

Ու՞մ աթոռին — Եբր. 1:3 - 3 Որ նորա փառքի լոյսը լինելով եւ նորա էութեան նկարագիրը, որ իր զօրության խօսքով ամեն բան կրում է՝ մեր մեղքերի սրբութիւնն իրանով անելուց հետո նստեց Աստուծո մեծութեան աջ կողմը բարձունքներումը.

Իսրայելի վրա — Մատ. 19:28 - 28 Յիսուսն էլ ասեց նորանց. Ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ դուք՝ իմ ետեւից եկողներդ, **վերստին ծննդում՝** (at the renewal of all things, in the new world, in the regeneration) երբոր մարդի Որդին **իր փառաց աթոռի** վրա կնստի, դուք էլ տասնեւերկու աթոռի վրա կնստեք՝ եւ Իսրայէլի տասնեւերկու ցեղերը կդատէք։

Հազարամյակի ժամանակ — Հայ. 20:4 - 4 Եւ տեսա աթոռներ, եւ նորանց վրա նստեցին. եւ նրանց իշխանություն տրուեց դատելու եւ ընտրելու այն հոգիներին, որոնք գլխատուել էին Յիսուսի վկայութեան համար եւ Աստուծոյ խօսքի համար. նաեւ նրանց որոնք չերկրպագեցին գազանին եւ չստացան նրա դրոշմը իրենց ճակատների, ոչ էլ իրենց աջ ձեռքի վրա. եւ նրանք նորից կեանք ստացան ու թագավորեցին Քրիստոսի հետ հազար տարի։

Թագավորել Նրա հետ — 2 Տիմ. 2:12 - 12 Եթէ համբերենք, հետն էլ կ՚թագաւորենք, եւ եթէ ուրանանք, նա էլ կ՚ուրանա մեզ։

Ո՞վ է «Հաղթողը»։

«Քանի որ այն ամենը, ինչ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին. և սա է հաղթանակը, որ հաղթում աշխարհին՝ մեր հավատը։ Ո՞վ է այս աշխարհին հաղթողը, եթե ոչ նա, ով հավատում է, թե Հիսուսն Աստծո Որդին է» Ա Հովհ. 5:4,5։

՝Ա Հովհ. 5:4,5

7. Ավարտ – Close

29) Նա, ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին։

«Նա, ով ականջ ունի…» 7 անգամ Հայտնության մեջ, և 7 անգամ Ավետարաններում (Մաթ. 11:15, 13:9,43, Մարկ. 4:23, 7:16, Ղուկ. 8:8, 14:35)։

Յոթ առակներ թագավորության մասին. Մատթեոս 13 – Հայտ. 2 եւ 3

1. Սերմնացանը և 4-հողերը, Մատթեոս 13:3-9 — Եփեսոս
2. Որոմները և ցորենը, Մատթեոս 13:24-30 — Զմուռնիա
3. Մանանեխի սերմը, Մատթեոս 13:31-32 — Պերգամոն
4. Կինը և թթխմորը, Մատթեոս 13:33 — Թիվատիր
5. Գանձը դաշտի մեջ, Մատթեոս 13:44— Սարդեսի
6. Մեծ առժեք ունեցոշղ մարգարիտը, Մատթեոս 13:45-46 — Ֆիլադելֆիա
7. Ուռկանը, Մատթեոս 13:46-50 — Լավոդիկիա

Հաջորդ դասը

Կարդա 4-րդ գլուխը՝ Գահասենյակը երկնքում, 5-րդ գլուխը՝ յոթ կնիքով կնքված գիրքը, և Հռութի գիրքը։ Ովքե՞ր են 24 երեցները։ Ինչու՞ են նրանք մեզ համար հատկապես կարևոր։

Խրատական մակարդակ (բոլոր եկեղեցիներին)
Admonitory Level (to all churches)

- ✓ Եփեսոս – Նվիրում, ոչ թե միայն վարդապետություն
- ✓ Զմյուռնիա – Տոկալ (դիմանալ) նեղություններին
- ✓ Պերգամոն – Մաքրեզերծել դեսպանության ծառայությունը
- ✓ Թիվատիր – Հեթանոսական գործունեություն
- ✓ Սարդիկե – Զգոնություն, արթուն վիճակ
- ✓ Ֆիլադելֆիա – Միսիոներական ծառայություն
- ✓ Լավոդիկե – Բարգավաճման փոխզիջում

Անձնական կիրառություն (Հոմոլետիկա)
Personal Application (Homiletics)

- ✓ Եփեսոս – Անտեսված առաջնայնություններ
- ✓ Զմյուռնիա – Սատանայական ընդդիմություն
- ✓ Պերգամոն – Հոգևոր փոխզիջում
- ✓ Թիվատիր – Հեթանոսական գործունեություն
- ✓ Սարդիկե – Զգոնություն, արթուն վիճակ
- ✓ Ֆիլադելֆիա – Հավատարիմ դեսպանություն
- ✓ Լավոդիկե – Նյութապաշտական ուրացություն

Խոստում հաղթողներին
Promise to the Overcomer

- ✓ Եփեսոս – Ուտել Կենաց ծառից
- ✓ Զմյուռնիա – Չվնասվել երկրորդ մահից
- ✓ Պերգամոն – Մանանա, քար, անուն
- ✓ Թիվատիր – Իշխանություն ազգերի վրա
- ✓ Սարդիկե – Քայլել Նրա հետ ճերմակներով, անունը չի ջնջվի
- ✓ Ֆիլադելֆիա – Սյուն տաճարում, Աստծո անունը, Նրա քաղաքի անունը
- ✓ Լավոդիկե – Նստել Նրա հետ Նրա աթոռին

Մարգարեական պատկերը
Prophetic Profile

- ✓ Եփեսոսը ներկայացնում է Առաքելական Եկեղեցին։
- ✓ Զմյուռնիան ներկայացնում է հալածվող եկեղեցին։
- ✓ Պերգամոնը ներկայացնում է «ամուսնացած» եկեղեցին
- ✓ Թիվատիրի եկեղեցին ներկայացնում է (Միջնադարյան) Եկեղեցին։ Պապական իշխանությունը։
- ✓ Սարդիկեն ներկայացնում է Հարանվանական եկեղեցին։
- ✓ Ֆիլադելֆիան ներկայացնում է Միսիոներական Եկեղեցին։
- ✓ Լավոդիկիան ներկայացնում է ուրացող եկեղեցին։



Այսպես է ասում Քրիստոս մեր Տերը մեզ.

Դուք Ինձ կոչում եք Տեր, սակայն չեք հնազանդվում:

Դուք Ինձ կոչում եք Լույս, սակայն Ինձ չեք տեսնում:

Դուք Ինձ կոչում եք Ճանապարհ, սակայն Ինձանով չեք քայլում:

Դուք Ինձ կոչում եք Կյանք, սակայն Ինձ չեք ընտրում:

Դուք Ինձ կոչում եք Արդար, սակայն Ինձ չեք սիրում:

Դուք Ինձ կոչում եք Հարուստ, սակայն Ինձ չեք դիմում:

Դուք Ինձ կոչում եք Հավիտենական, սակայն Ինձ չեք փնտրում:

Դուք Ինձ կոչում եք Իշխան, սակայն Ինձ չեք ծառայում:

Դուք Ինձ կոչում եք Առատաձեռն, սակայն Ինձ չեք վստահում:

Դուք Ինձ կոչում եք Հզոր, սակայն Ինձ չեք պատվում:

Դուք Ինձ կոչում եք Արդարադատ, սակայն Ինձանից չեք վախենում:

Եթե Ես ձեզ դատեմ, Ինձ չմեղադրեք:

— Սա գրված է Գերմանիայի Լյուբեկի եկեղեցիներից մեկի վրա: